

Լ. Մ. Աբդալլա

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2009

Գրքի թարգմանությանն ու
տպագրությանն աջակցել է «**Լույս
ազգերի համար**» կազմակերպությունը



Light for
the Peoples

Երևանի Ա.Յ.Ք. «Վերնատուն» Եկեղեցի

Երևան, Նոր-Արեշ 22 փող., 117/2 տ.

Հեռ. (+ 374 10) 47 35 81

e_mail: vernatur@netsys.am



© L. M. Abdullah 2001 - Հեղինակային և հարակից
իրավունքները պաշտպանված են

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|----------------------------|----|
| Ահմեդն ու Ջամիդը | 5 |
| Ձոհաբերման Գառը | 8 |
| Բարձրյալի Խոսքը | 12 |
| Բարձրյալի Ձոհը | 16 |
| Մեղքը | 22 |
| Իբրահիմի Որդին | 29 |
| Բարձրյալը մեկ է | 35 |
| Բարձրյալ և մարդ | 44 |
| Մեջբերումներ | 55 |

Ահմեդն ու Յամիդը

Ահմեդն աշխատում էր մի փոքրիկ գրասենյակում: Ասել, որ նա դժգոհ էր իր աշխատանքից, միգուցե, այնքան էլ ճիշտ չէր լինի: Բայց, ամեն դեպքում, բաժնի ղեկավարի հետ միշտ չէ, որ ստացվում էր համագործակցել: Նա երբեք թույլ չէր տալիս Ահմեդին ցույց տալ իր իրական ընդունակությունները: Իսկ երբ բաժինը հաջողությամբ գլուխ էր հանում մի ավելի բարդ նախագծից, ղեկավարը միշտ իրեն էր վերագրում մյուս աշխատակիցների արժանիքները:

Մեկ անգամ չէ, որ Ահմեդը մտածել էր աշխատանքը փոխելու մասին: Բայց կյանքը դաժան էր, և այդ պահին դժվար էր ավելի հարմար մի բան գտնելը: Բացի դրանից, նրա աշխատավարձը զգալիորեն բարձր էր նրանցից, ինչ նրան առաջարկում էին ուրիշ տեղերում: Գումարը պակաս կարևոր գործոն չէր, քանի որ Ահմեդը պահում էր կնոջը և երեք երեխաներին: Նա շատ էր հպարտանում իր երեխաներով, հատկապես Յասանով՝ ավագ որդիով, որը սովորում էր համալսարանում և ուզում էր ինժիներ դառնալ:

Բայց ահա մի անգամ բաժնում մի այնպիսի բան տեղի ունեցավ, որն իրավիճակը փոխեց դեպի լավը. Ահմեդն ունեցավ մի նոր գործընկեր՝ Յամիդը:

Նա մի փոքր ավելի երտասարդ էր Ահմեդից, միշտ ուրախ և բարձր տրամադրությամբ. նրա հետ հեշտ էր լեզու գտնել: Վերջապես Ահմեդն աշխատանքի վայրում ընկեր ունեցավ: Նրանք սկսեցին միասին ճաշել, հանդիպել գործից հետո: Համիդը նույնպես ամուսնացած էր, և Բարձրյալը նրան օրհնել էր չորս երեխաներով՝ երկու տղա և երկու աղջիկ:

Շուտով Ահմեդն ու Համիդը մտերիմ ընկերներ դարձան, սկսեցին իրար հյուր գնալ: Նրանց շատ էր դուր գալիս նստել և զրուցել մի բաժակ թեյի շուրջ: Նրանք կարող էին ժամերով քննարկել ամենատարբեր թեմաներ: Սկզբում նրանց զրույցները հիմնականում վերաբերում էին աշխատանքին, բայց ժամանակի ընթացքում նրանք ավելի հաճախ սկսեցին անդրադառնալ կյանքի կարևոր հարցերին: Թեև երկուսն էլ լուրջ էին վերաբերվում կրոնին, հավատի մեջ նրանք ունեին զգալի տարբերություններ. Ահմեդն ավանդական մուսուլման էր, իսկ նրա լավագույն ընկեր Համիդը պարբերաբար կարդում էր Թաուրաթը, Մարգարեների Գիրքը, Զաբուրը, Ինժիլը և Իսա Մասիհի¹ հետևորդ էր:

¹ «Մասիհ» նշանակում է «օծյալ» (նշանակված): Հին Իսրայելում թագավորին (յուդով) օծում էին, երբ նա պետք է գահակալեր: Իսայի ժամանակ ժողովուրդը սպասում էր Մասիհի գալուն: Մարգարեների Գրքի համաձայն, Մասիհը (այսինքն՝ Արդար Թագավորը և Ազատարարը) պետք է լիներ Դավուդ թագավորի սերնդից, որը կազատեր ժողովրդին կեղեքումից և կհաստատեր արդար ու հավերժական թագավորություն:

Բայց ամենից առավել Ահմեդին զարմացնում էր այն, որ ինչքան շատ էր նա ճանաչում Յամիդին, այնքան ավելի մեծ հարգանքով էր լցվում նրա դավանանքի և Բարձրյալի հետ ունեցած նրա կյանքի հանդեպ: Ահմեդը սկսեց հասկանալ, որ նրա ընկերը Բարձրյալի հետ անձնական փոխհարաբերություններ ունի – այնպիսի մի բան, որ նա երբեք չէր փորձառել, և դա նրան շատ հետաքրքրեց: «Յամիդի կյանքը Բարձրյալի հետ անպայման կապ ունի Մասիհի հետ», – մտորում էր Ահմեդը: Նա նույնպես հավատում էր Մասիհին, բայց այլ կերպ: Ահմեդը հավատում էր այն բոլորին, ինչ գրված է Ղուրանում Իսայի՝ Մարիամի որդու մասին: Նա խորապես պատվում էր Մասիհին: Նա գիտեր, որ Մասիհը ծնվել է Մարիամ անունով մի կույսից, որ նա Բարձրյալի կանքով կատարել է բազում հրաշքեր և լսել էր, որ Նրա մասին գրված է Ինժիլում: Միևնույն ժամանակ Ահմեդը հասկանում էր, որ նա տեղյակ է Մասիհի կյանքից ընդամենը մի քանի տվյալների, և նրա մեջ ծնվեց մի խորը ցանկություն՝ ավելին իմանալ Բարձրյալի այդ մեծ Պատգամաբերի (ռասուլի) մասին, որին անգամ Ղուրանում այնքան շատ անուններ է տրված:

Վերջապես Ահմեդը, դրդված իր հետաքրքրասիրությունից, որոշեց հարցուփորձ անել իր ընկերոջը Մասիհի մասին: Այդ որոշումն իր հետ բերեց բազմաթիվ հետաքրքիր գրույցներ:

Ջոհաբերման Գառը

– Պատմիր ինձ Իսայի՝ Մարիամի որդու մասին,–
լրջորեն խնդրեց Ահմեդը,– ես ուզում եմ Նրա մա-
սին ավելին իմանալ:

Չամիդը մտածեց մի փոքր ու ասաց.

– Եթե դու ուզում ես հասկանալ, թե ինչու Մասի-
հը աշխարհ եկավ, դու պետք է գիտակցես զոհի
նշանակությունը:

– Ջոհի՞: Դու ի՞նչ նկատի ունես,– հարցրեց Ահ-
մեդը:

Չամիդը պատասխանեց.

– Ջոհի իմաստը հասկանալի է դառնում Կուր-
բան-Չայտի (Իդ-Ալ-Ախտա) օրինակով: Դու, իհար-
կե, գիտես, որ այս դեպքը նշանավորվեց այն ժա-
մանակ, երբ Ամենակարող Ալլահը պատվիրեց Իբ-
րահիմ մարգարեին զոհաբերել իր որդուն: Իսկ ի՞նչ
կկատարվեր Իբրահիմի որդու հետ, եթե Բարձրյա-
լը չապահովեր զոհը որպես փրկագին (ֆիդյա) նրա
համար:

– Իբրահիմի որդին կմահանար,– պատասխա-
նեց Ահմեդը:

– Ահա հենց դրանում էլ կայանում է զոհի իմաս-
տը,– ասաց Չամիդը,– երբ ինչ-որ մեկը մահանում
է մյուսի փոխարեն: Բարձրյալը խոյ ուղարկեց, որն
էլ զոհաբերվեց նրա փոխարեն: Ես գտնվում եմ

նույն վիճակում, ինչ Իբրահիմի որդին՝ մահվան իշխանության ներքո:

– Ի՞նչ ես ուզում դրանով ասել,– մի փոքր շփոթված ասաց Ահմեդը:

Համիդը լուրջ պատասխանեց.

– Գրված է Սուրբ Գրքում՝ Ինժիլում.

«Քանի որ մեղքի վարձը մահ է, իսկ Բարձրյալի պարգևը՝ հավիտենական կյանք՝ մեր Տիրակալի՝ Իսա Մասիհի հետ միության մեջ»: (1)

– Իմ մեղքի վարձը մահ է: Ես մեղավոր եմ:

– Մյուս մարդկանց աչքերին ես միգուցե արդար եմ երևում, քանի որ ես ամեն օր աղոթում եմ, կարդում եմ Բարձրյալի Խոսքը, ծառայում եմ Նրան: Բայց Բարձրյալի առաջ ես մեղավոր եմ: Կա՞րո՞ւյրք կատարյալ մեկը Բարձրյալի առաջ,– հարցրեց Համիդը:

– Ո՛չ,– ասաց Ահմեդը,– միայն Բարձրյալն է կատարյալ:

– Ուրեմն՝ բոլորը Նրա առջև մեղավոր են, ճի՞շտ է,– հարցրեց Համիդը:

– Այո՛, իհարկե՛ս,– համաձայնեց Ահմեդը:

– Դրա համար էլ ես գտնվում եմ այն նույն վիճակում, ինչ Իբրահիմի որդին՝ մահվան իշխանության ներքո: Իսկ ու՞ր է զոհը իմ մեղքերի համար: Մի՞թե Բարձրյալը զոհ չի ուղարկել ինձ փրկագնելու համար,– շարունակում էր հարցնել Համիդը:

Ահմեդն ուղղակի չգիտեր, թե ինչ ասեր: Համիդը շարունակեց.

– Յահիան՝ Ջաքարիայի որդին, որն ապրում էր Մասիհի հետ միևնույն ժամանակ, առաջին անգամ Նրան տեսնելով, ասաց.

«Ահա Ձոհաբերման Գառը, որն Իր վրա է վերցնում աշխարհի մեղքը»: (2)

Մասիդը մարդկային գառնուկ չէր: Նա Բարձրյալի Ձոհաբերման Գառն էր: Նա եկել էր Բարձրյալի մոտից: Նա եկել էր վերևից: Բարձրյալի Հոգին (Ռուհ Ալլահ) հովանի եղավ Մարիամի (Մարիամ Ալ-Ստրա) վրա, նա հղիացավ և որդի ծնեց: Ինչպես դու գիտես, Նրան կոչում են Իսա, Մարիամի որդի, Բարձրյալի Խոսք (Քալիլատ Ալլահ) և Բարձրյալի Հոգի (Ռուհ Ալլահ): Նա անարատ էր: Նա եկավ երկնքից՝ որպես Բարձրյալի Ձոհաբերման Գառ, որպեսզի Իր վրա վերցնի աշխարհի մեղքը. Նա պետք է զոհաբերվեր: Հենց դա էլ տեղի ունեցավ, երբ Նա կամավոր կերպով Իր կյանքը մատնեց մահվան: Բայց Նա հարություն առավ մեռելներից, կենդանի կերպով համբարձվեց երկինք և մի օր ետ կվերադառնա այս աշխարհ:

Համիդը մի փոքր լռեց, նայեց Ահմեդին և ասաց.

– Ես նույն վիճակում եմ, ինչ Իբրահիմի որդին՝ մահվան իշխանության ներքո: Բայց Մասիհի՝ անարատ Ձոհաբերման Գառան շնորհիվ իմ մեղքերի համար զոհ կա: Բարձրյալն այս Գառան մի-

ջոցով թողություն է առաջարկում մեր բոլոր մեղքերի համար և հավիտենական կյանք՝ դրախտում (ջանայում): Մասիհն իր վրա վերցրեց ամբողջ մարդկության մեղքերը՝ ներառյալ նաև քոնը, Ահմեհ:

Ահմեդը երկար ժամանակ լուռ նստած էր և մտածում էր: Որոշ ժամանակ անց նա ասաց.

– Եթե Մասիհն իր վրա է վերցրել ամբողջ աշխարհի մեղքը, ուրեմն՝ ես չպետք է մեռնեմ ... Այդ դեպքում ես արդեն ունեմ հավիտենական կյանք:

– Ահմեհ, – ասաց Համիդը, – պատկերացրու, որ քո ծննդյան տոնն է, և Մասիհը թակում է քո դուռը: Նա քեզ մի նվեր է բերել, և նա ասում է քեզ. «Ահմեհ, ես կուզենայի այն քեզ նվիրել, նրանում քո մեղքերի թողությունն է, հավիտենական կյանքը և կենդանի, անձնական հաղորդակցություն Բարձրյալի հետ արդեն այսօր: Բայց կան մի քանի պայմաններ. դու պետք է ապաշխարես, խոստովանես քո մեղքը և ընդունես թողություն՝ քո փոխարեն արած իմ գոհի միջոցով: Եթե դու ընդունես այդ նվերը, այն քոնն է, այլապես՝ ոչ»:

Ահմեդը մտածում էր այն մասին, ինչ մի փոքր առաջ լսեց:

– Միգուցե դու մտածում ես, որ սա անսովոր մի օրինակ է, – ասաց Համիդը, – բայց ամեն անգամ, երբ Բարձրյալի ինչ-որ մի ծառա բացատրում է Բարձրյալին տանող ճանապարհը Մասիհի միջո-

ցով, դա նույնն է, որ հարութիւնն առած կենդանի
Իսան՝ Մարիամի որդին, թակում է մեր դուռը: Նա
հենց այդպէս էլ ասում է Ինժիլում.

**«Ահա ես կանգնել եմ դռան մոտ և թա-
կում եմ. եթէ մեկը Իմ ձայնը լսի և դուռը բա-
ցի, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ,
և նա էլ՝ Ինձ հետ»:** (3)

Համիդը շարունակում էր.

– Բացել դուռը Մասիհի համար և հրավիրել
Նրան սեփական կյանքը, որպեսզի Նա կիսի քեզ
հետ հաց և հաղորդակցութիւն – դա նույն բանն է,
թէ ընդունել Բարձրյալի պարգևը, որ Նա առաջար-
կում է ամեն մարդու:

– Գիտե՞ս, Համի՛դ, այն ամենը, ինչ դու մի փոքր
առաջ պատմեցիր Մասիհի մասին, խորը ցնցեց
ինձ: Ես կուզեմայի մտորել լսածիս մասին,
միևնույն ժամանակ ես հույս ունեմ՝ ավելին իմա-
նալ մեր մյուս հանդիպման ժամանակ:

Բարձրյալի Խոսքը

– Այն, ինչ առաջին անգամ դու ինձ պատմեցիր
Իսայի՝ Մարիամի որդու մասին, ինձ բավականին
առիթ տվեց մտորելու, – զգուշորեն սկսեց Ահմեդը, –
մինչ Մասիհի մասին մեր խոսակցութիւնը շարու-
նակելը, ես կուզեմայի մի քանի հարցերի պատաս-
խան ստանալ:

– Իհարկե՛, – պատասխանեց Յամիդը՝ արդեն ենթադրելով, թե ինչի մասին է պատրաստվում խոսել Ահմեդը:

Ահմեդը զգուշորեն սկսեց.

– Դու գիտես, որ մենք՝ մուսուլմաններս, հավատում ենք երկնային գրքերին՝ Թաուրաթին (Մուսիի Յնգամատյանը), Ջաբուրին (Դավուդի Երգերը), Ինժիլին (Բարի Լուր Իսայի մասին) և Սուրբ Դուրանին: Բայց ինձ սովորեցրել են, որ բոլոր գրքերը՝ բացառությամբ Դուրանի, խեղաթյուրվել են քրիստոնյաների և հրեաների կողմից, այն էլ այն աստիճանի, որ նրանց գրվածքների վրա արդեն չի կարելի հենվել: Սուրբ Գիրքը, որին դու հավատում ես, խեղաթյուրված է (մախարաֆ) և իրենից ներկայացնում է ճշմարտության և ստի մի խառնուրդ:

– Իսկ դու կարո՞ղ ես դրա համար գոնե մեկ ապացույց ներկայացնել, – հարցրեց Յամիդը:

Ահմեդը մի փոքր մտածեց, բայց, ի զարմանս իրեն, հայտնաբերեց, որ ոչ մի անգամ չի լսել ավելին, բացի ոչ մի բանով չհիմնավորված ենթադրություններից:

Յամիդը շարունակեց.

– Ասա՛, իսկ ե՞րբ է տեղի ունեցել այդ ենթադրյալ խեղաթյուրումը, և ինչպե՞ս կարելի էր այն իրականացնել:

– Գաղափար անգամ չունեմ, – շփոթվեց Ահմեդը, – այդպիսի կարևոր հարցերի պատասխան ինձ

ոչ ոք չի տվել:

Մի փոքր լռությունից հետո Համիդը հարցրեց.

– Իսկ կարո՞ղ ես դու պատկերացնել, որ որևէ մեկը խեղաթյուրի Ղուրանը:

– Աստագֆա՛ր Ալլահ (Բարձրյալը ողորմի),– գոչեց Ահմեդը,– դա բացարձակապես անհնարին է, հավատացյալները երբեք թույլ չէին տա որևէ մեկին դիպչել Ղուրանին այդպիսի մտադրությամբ:

Համիդը պատասխանեց.

– Ինչու՞ ես դու այդ դեպքում մտածում, որ մենք այլ կերպ ենք վերաբերվում Թաուրաթին, Մարգարեների Գրքին, Ջաբուրին և Ինժիլին, և որ իսկական հավատացյալները կարող էին թույլ տալ խեղաթյուրել Սուրբ Գիրքը: Ես հավատում եմ Բարձրյալին, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, Ամենագետ և Ամենագոր Աստծուն: Նա է տվել մարդկանց իր խոսքը, և Նրա իշխանության մեջ է մտնում պահպանել այդ խոսքը:

Համիդն ուղիղ նայեց Ահմեդի աչքերի մեջ և հարցրեց.

– Դու հավատու՞մ ես, որ ամեն բան տեղի է ունենում Բարձրյալի կամքով:

– Այո՛, իհարկե, Բարձրյալն ի զորու է պահպանել իր խոսքը,– համաձայնեց Ահմեդը:

– Գիտե՞ս, Ահմե՛դ,– ասաց Համիդը,– Սուրբ Գիրքը հրաշալի գիրք է. այն գրվել է մոտավորապես 1400 տարիների ընթացքում: Նրա մեջ մըտնում են

Թաուրաթը (Մուսիի Յնգամատյանը), Ջաբուրը (Դավուդի Երգերը), Ինժիլը (Բարի Լուրը Իսայի մասին) և շատ ուրիշ գրքեր, որոնք գրվել են Բարձրյալի մարգարեների կողմից: Թաուրաթը, Մարգարեների Գիրքը և Ջաբուրը վերաբերվում են մինչև Մասիիի ծնունդն ընկած ժամանակահատվածին, իսկ Ինժիլը սկսվում է Մասիիի աշխարհ գալով: Սուրբ Գիրքը գրվել է երեք տարբեր լեզուներով:

– Ո՞ր լեզուներով,– հետաքրքրվեց Ահմեդը:

– Յին եբրայերենով, արամերենով և հունարենով,– պատասխանեց Յամիդը,– Իր Խոսքը տալիս Բարձրյալն օգտագործել է ամենատարբեր մարդկանց՝ սուլթանների և ազնվականների, հովիվների և ձկնորսների: Սուրբ Գիրքն իսկապես Բարձրյալի հրաշքն է, քանի որ, չնայած այն գրվելու երկար ժամանակահատվածին և գրողների մեծ թվին, ամբողջ գիրքը մեկ ամբողջություն է. ամբողջ Գրքի երկայնքով մի թեմա է անցնում: Այդ թեման, Ահմեդ, հենց Մասիհն է:

– Մի՞թե 1400 տարի շարունակ Բարձրյալը խոսել է Մասիիի մասին,– զարմացած հարցրեց Ահմեդը:

– Ահմեդ,– ժպտաց Յամիդը,– Բարձրյալը Մասիիի մասին խոսում է մարդկության ողջ պատմության ընթացքում՝ ընդհուպ մինչև մեր օրերը:

– Մի՞թե դա հնարավոր է,– տարակուսեց Ահմեդը:

– Իհարկե՛, չե՞ որ Բարձրյալի համար անհնարին ոչինչ չկա,– պատասխանեց Չամիդը,– բայց այդ մասին մենք կարող ենք խոսել մեր մյուս համդիպման ժամանակ:

– Լավ, ես անհամբերությամբ կսպասեմ,– ասաց Ահմեդը:

Բարձրյալի Ձոհը

– Չետաքրքիր է՝ ինչպե՞ս կարող է Մասիհը լինել ամբողջ Սուրբ Գրքի գլխավոր թեման,– հարցրեց Ահմեդը:

– Չիշու՞մ ես՝ մենք խոսում էին Մասիհի մասին որպես Բարձրյալի Ձոհաբերման Գառան, որն Իր վրա վերցրեց մեղքը,– հարցրեց Չամիդը:

– Իհարկե՛, ինչպե՞ս կարող եմ մոռանալ,– պատասխանեց Ահմեդը:

– Բարձրյալը սովորեցնում էր զոհի մասին ամբողջ պատմության ընթացքում՝ մինչև Իսայի՝ Մարիամի որդու գալը,– ասաց Չամիդը:

– Ի՞նչ նկատի ունես,– հարցրեց Ահմեդը:

– Քանի՞ մարդիկ էին ապրում Քաբիլի ու Աբելի ժամանակներում,– հարցրեց Չամիդը:

Ահմեդը զարմացավ հարցի վրա, բայց պատասխանեց.

– Չորս՝ Ադամը, նրա կին Չավան (Եվան), Քաբելն ու Աբելը:

– Միայն չորս,– ասաց Յամիդը,– բայց նրանք արդեն հասկանում էին, որ Բարձրյալին կարելի է երկրպագել միայն զոհով: Ինչպե՞ս կարող էին նրանք դա իմանալ,– հարցրեց Յամիդը և ինքն էլ պատասխանեց.

– Ուղղակի նրանք գիտեին, որ Բարձրյալը մաքուր է և սուրբ, իսկ մարդը՝ մեղավոր, և կարիք ունի զոհի՝ իր մեղքերի քավության համար:

Նույն Պայգամբարը (Նոյ Մարգարեն) երկրպագում էր Բարձրյալին զոհի միջոցով, Իբրահիմ Պայգամբարը նույնպես զոհի միջոցով, Մուսա Պայգամբարը, Դավուդը, մարգարեները և Մասիհի բոլոր պատգամաբերները երկրպագում էին Բարձրյալին զոհերի միջոցով: Իսկ դու գիտե՞ս, որ ես էլ եմ Բարձրյալին երկրպագում նույն ձևով:

– Ո՛չ, հիմա դու հաստատ կատակում ես,– ասաց Ահմեդը,– Դու հո չե՞ս գնում շուկա, որպեսզի ոչխար գնես, որին հետո պիտի զոհ մատուցես,– ժպտաց նա լայն ժպիտով:

– Ես երկրպագում եմ Բարձրյալին Մասիհի՝ Բարձրյալի Ձոհաբերման Գառան միջոցով, Ով կրեց իմ մեղքերը, երբ զոհաբերվեց,– պատասխանեց Յամիդը,– Ինժիլում գրված է.

«Բարձրյալը մեկ է, մեկ է և միջնորդը Բարձրյալի և մարդկանց միջև — Իսա Մասիհի մարդը: Նա տվեց Ինքն Իրեն որպես փրկագին բոլոր մարդկանց համար, Նա

Բարձրյալի վկայությունն է աշխարհին՝ տրված իր ժամանակին»: (1)

Կա միայն մեկ Բարձրյալ և միայն մեկ միջնորդ Նրա և մարդկանց միջև – Իսա Մասիհը, որն իրեն որպես փոխարինաբար զոհ ներկայացրեց բոլորի համար, ներառյալ նաև քեզ համար, Ահմե՛դ: Ամբողջ պատմության ընթացքում՝ ընդհուպ մինչև մեր օրերը, մարդիկ երկրպագում են Բարձրյալին զոհաբերությունների միջոցով:

– Ինձ թվում է՝ ես սկսում եմ հասկանալ քեզ, բայց ես կարիք ունեմ ավելի մանրակրկիտ պարզաբանման, որպեսզի ունենամ ամբողջական պատկերը, – ասաց Ահմեդը՝ մտորելով այն մասին, ինչ քիչ առաջ լսեց:

Համիդը մի փոքր մտածելուց հետո ասաց.

– Բարձրյալը հայտնել է զոհի նշանակությունն ու իմաստն ամբողջ պատմության ընթացքում՝ հատկապես Մուսա Պայգամբարի միջոցով Թաուրաթում (Մուսիի Հնգամատյանը): Օրենքի ուսուցումը (Ալ–Շարիա) զոհի մասին՝ որպես մեղքի համար քավություն, ավելի հասկանալի է դառնում Սուրբ Գրքի հետևյալ խոսքերից.

«Օրենքը պահանջում է, որ գրեթե ամեն բան մաքրվի արյունով, և առանց արյուն թափվելու թողություն չկա»: (2)

– Բայց ինչպե՞ս է այդ ամբողջ ուսուցումը կապված Իսայի՝ Մարիամի որդու հետ, – հետաքրքրվեց

Ահմեդը:

– Ահա թե ինչպես, – ասաց Չամիդը, – զոհի իմաստի ուսուցմանը զուգընթաց՝ մարգարեները հռչակում էին բազում տարբեր մարգարեություններ Մասիհի մասին: Այդ մարգարեությունների մեջ կային նաև կանխասացություններ այն մասին, որ երբ Մասիհը աշխարհ գար, նա իրեն կգոհաբերեր՝ զոհ լինելու մեր մեղքերի համար:

Չամիդը վերցրեց Սուրբ Գիրքը, բացեց այն և ցույց տվեց Ահմեդին:

– Ահա՛, ինքդ նայի՛ր, թե ինչ մանրամասն է նկարագրված Մասիհի զոհը Իշայահ Պայգամբարի կողմից Մասիհի գալուց մոտ 700 տարի առաջ.

«Բայց Նա վերցրեց մեր տկարությունները և կրեց մեր վշտերը. իսկ մենք մտածում էինք՝ Բարձրյալն է Նրան հարվածում, ծեծում է Նրան, Նա էլ տանջվում է: Բայց Նա վիրավորվեց մեր մեղքերի համար, անարգվեց մեր անօրենությունների համար, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք: Մենք բուլորս՝ ինչպես ոչխարներ, մոլորվեցինք ճանապարհից, մեզնից ամեն մեկը գնաց իր ճանապարհով, իսկ Չավիտենականը մեր մեղքերը Նրա վրա դրեց: Նա տառապեց և տանջվեց, բայց իր բերանը չբացեց: Ինչ-

պես մի գառնուկ Նա տարվեց մորթվելու, և ինչպես մի մաքի իրեն խուզողների առաջ, այնպես իր բերանը չբացեց»: (3)

Ահմեդը, խորապես ազդված մարգարեական խոսքերից, զարմացած հարցրեց.

– Մի՞թե դա գրվել է Իսայի՝ Մարիամի որդու ծնունդից շատ տարիներ առաջ:

– Իհարկե՛, – ասաց Համիդը, – և համաձայն մարգարեության՝ Մասիհը պետք է սերեր Դավուդ թագավորից: Դավուդը, ապրելով 1000 տարի Մասիհից առաջ, նկարագրում է գրեթե ամենայն ճշգրտությամբ իր ապագա հետնորդի՝ Մասիհի խաչելությունը: Դու գիտես, որ խաչելությունը շատ դանդաղ և տանջալից մահվան միջոց էր: Որոշ ժամանակ անց խաչվածների ոսկորները դուրս էին գալիս հողերից, միևնույն ժամանակ նրանք տառապում էին ծարավից: Չաբուրում գրված է.

«Ես ջրի նման թափվեցի, իմ բոլոր ոսկորները քանդվեցին, սիրտս մոմի պես եղավ և հալվեց փորիս մեջ, ուժս չորացավ կապե ամանի պես և լեզուս քիմքիս կպավ: Դու ինձ մահվան հողը դրիր: Շներն ինձ շրջապատեցին, չարերի ժողովն ինձ շրջապատեց, ձեռքերս և ոտքերս ծակեցին: Իմ բոլոր ոսկորները կարող եմ հաշվել, իսկ նրանք նայում են ու չարախնդում են ինձ

վրա: Նրանք իմ հագուստն իրար մեջ են բաժանում, և իմ հանդերձի համար վիճակ են գցում»: (4)

Այս ճշգրիտ նկարագրությունը տրված է Դավուդի կողմից չնայած նրան, որ այդ պատժի տեսակը նրա օրերում դեռ չէր կիրառվում: Այն ստեղծվել է զգալիորեն ավելի ուշ և կիրառվում էր հռոմեացիների կողմից Իսա Մասիհի ժամանակներում:

– Այսինիքն՝ դու ուզում ես ասել, որ այդ բոլոր կանխասացություններն իրականացել են Իսայի՝ Մարիամի որդու մեջ,¹ – հետաքրքրվեց Ահմեդը:

– Այո՛, և ոչ միայն սրանք, այլ բազում ուրիշ մարգարեություններ էլ բառացիորեն կատարվել են Մասիհի մեջ, – պատասխանեց Յամիդը, – Մասիհն ինքն էլ շատ անգամ հաստատում էր, որ Նա եկել է Իր կյանքը տալու որպես քավություն (ֆիդա): Նա Ինքն Իր մասին այսպես ասաց.

«Չէ որ ես էլ, Նա, ով ուղարկվեց որպես Մարդ¹, եկա ոչ թե նրա համար, որ Ինձ ծառայեն, այլ որպեսզի ես ծառայեմ մյուսներին և Իմ կյանքը տամ որպես փրկագին շատերի համար»: (5)

– Ահմեդ, դու հիմա տեսնում ես, որ զոհերի մասին Բարձրյալի ուսմունքն անցնում է ամբողջ Սուրբ Գրքով մեկ և իրականանում Մասիհի մեջ:

– Յամիդ, – ասաց Ահմեդը, – նախկինում ես եր-

¹ Տիտղոս, որով Իսան Ինքն Իրեն ներկայացրեց:

բեք չեն լսել դրա մասին: Դա շատ հետաքրքիր է, և ես ժամանակի կարիք ունեմ, որպեսզի ամեն բան լիովին մտածեմ: Վստահ եմ, որ երբ մենք մյուս անգամ հանդիպենք, ես ավելի շատ նոր հարցեր կուներնամ:

– Խնդրում եմ, ընդունիր որպես նվեր այս Սուրբ Գիրքը,– ասաց Յամիդը,– սկսիր կարդալ Ինժիլից, այնտեղ պատմվում է Մասիհի կյանքի, Նրա զարմանալի հրաշքների և ուսմունքի մասին:

– Շատ շնորհակալություն,– պատասխանեց Ահմեդը,– Դուրանից ես շատ եմ լսել «Սուրբ Գիրք ունեցողների» (ահլ ալ–կիտաբ) մասին, բայց ինքս այդ Սուրբ Գիրքը դեռ երբեք չեմ կարդացել: Իսկ ես այնպես անհամբեր եմ ավելին իմանալու Իսայի՝ Մարիամի որդու մասին:

Մեղքը

– Յամիդ,– դանդաղ սկսեց Ահմեդը,– մեր անցյալ հանդիպումից հետո ես բավականին մտածել եմ Մասիհի մասին, այն մասին, թե ինչպես Նա տվեց Իր կյանքն ամբողջ մարդկության փրկության համար: Բայց մի բան կա, որ ես ուզում եմ հասկանալ. որտեղի՞ց է առաջանում մեղքը: Ինչու՞ բոլոր մարդիկ մեղքի հետ խնդիրներ ունեն: Դու կարո՞ղ ես դա բացատրել,– լրջորեն հարցրեց Ահմեդը:

– Կարծում եմ՝ կարող եմ, – պատասխանեց Յամիդը, – որպեսզի հասկանալ, թե որտեղից առաջացավ մեղքը, պետք է վերադառնալ ամենասկիզբին:

Թաուրաթուն (Մուսիի Յնգամատյանուն) մենք կարդում ենք, որ այն բանից հետո, երբ Արարիչը ստեղծեց աշխարհը և մարդկությունը, Նա մարդուն դրեց դրախտում (ջաննա): Դրախտում մարդը կատարյալ մաքուր էր և ապրում էր Բարձրյալի հետ կատարյալ ներդաշնակության մեջ: Բայց, ինչպես գիտես, տեղի ունեցավ մի բան, որը խախտեց այդ կյանքը դրախտում: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ, Ահմեդ:

– Շայթանը¹ եկավ և ամեն բան քանդեց, – պատասխանեց Ահմեդը:

– Շատ ճիշտ է, – գոչեց Յամիդը, – Բարձրյալն արգելեց, որպեսզի Ադամն ուտեր բարու և չարի գիտության ծառից, Նա ասաց Ադամին.

«Այգու մեջ եղած բոլոր ծառերից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի կեր, որովհետև այն օրը, որ դու այդ ծառի պտուղը ուտես, կմեռնես»: (1)

Բայց եկավ շայթանը օձի տեսքով և գայթակղեց Ադամին ու Յավային (Եվա). նրանք չլսեցին Բարձրյալին և կերան պտուղը: Դա կործանարար հետևանքների ունեցավ ամբողջ մարդկության հա-

¹ Շայթան – չար ոգիների առաջնորդը: Նաև ճանաչված է որպես սատանա, դև:

մար. այդ ժամանակվանից ի վեր մեղքը մտավ մարդու մեջ և դարձավ նրա մի մասը, և բոլոր մարդիկ, այսպիսով, դարձան մեղավորներ:

– Մի՞թե բոլորը մեղավորներ դարձան,– կասկածեց Ահմեդը,– ինձ համար դժվար է դրա հետ համաձայնվել: Ինչպե՞ս կարող էին բոլորը մեղավոր դառնալ:

– Մարդը դարձավ ճիշտ այնպիսին, ինչպիսին այն պտուղն էր, որ նա կերավ,– ասաց Յամիդը,– նա դարձավ բարու և չարի մի տարօրինակ խառնուրդ: Միևնույն մարդը մի պահի կարող է կատարել հրաշալի մի արարք, իսկ մի փոքր անց անել ինչ-որ ստահող և ստոր մի բան՝ խաբել կամ մատնել իր մերձավորին: Մարդը կարող է լինել սիրող և հոգատար, բայց միևնույն ժամանակ՝ լցված նախանձով, եսասիրությամբ, ատելությամբ, կրքով և ուրիշ մեղսալից հատկություններով:

– Ինչպես նկատեցիր, Ահմեդ, այս խնդիրը վերաբերվում է բոլոր մարդկանց: Բոլոր կրոնները փորձում են այն լուծել: Բոլոր կառավարություններն օրենքներ են հրապարակում, որոնք պետք է սահմանափակեն մեղքի տարբեր դրսևորումները: Բայց ամենավատն այն է, որ ոչ թե մարդը մեղավոր է, քանի որ մեղք է գործում, այլ հակառակը՝ նա մեղանչում է, քանի որ մեղավոր է: Ճիշտ այնպես, կարծես թե ամեն մարդու մեջ մեղք ու չարություն արտադրող մի փոքրիկ գործարան լինի: Մի՞թե

այդպես չէ, — հարցրեց Յամիդը՝ ուշադրությամբ նայելով Ահմեդին:

— Ցավոք, պետք է ընդունենմ, որ մարդու՝ քո նկարագրությունը համապատասխանում է իրականությանը, — ասաց Ահմեդը, — բայց ի՞նչ գործ ունի այստեղ շայթանը:

— Մեղքի միջոցով շայթանը իշխանությունն ձեռք բերեց մարդկային կյանքի և ամբողջ հանրության վրա, — պատասխանեց Յամիդը, — ժամանակին գայթակղելով Ադամին ու Յավային՝ նա այսօր էլ շարունակում է գայթակղել մարդկանց, որպեսզի մենք ապրենք մեղքի մեջ: Մեղքի միջոցով շայթանը պահում է իր իշխանությունը մեր կյանքում, քանի որ հենց մեղքն է մեզ բաժանում Բարձրյալից: Յենց մեղքի պատճառով է աշխարհն այսօր այսպիսի սարսափելի վիճակում:

Բարձրյալն ամեն բան գեղեցիկ ստեղծեց, բայց պատերազմների, կեղեքումների և ավերված փոխհարաբերությունների պատճառով մարդը շատ չարիք բերեց աշխարհ:

— Դու ուզում ես ասել, որ իրականում Բարձրյալը մեզ այսպիսին չի ստեղծել, ինչպիսին մենք այսօր կանք, իսկ աշխարհի այսօրվա վիճակն ընդամենն Ադամի մեղքի հետևանքն է, — հարցրեց Ահմեդը:

— Իհարկե՛, — գոչեց Յամիդը, — մեղքը մտավ մարդու մեջ Ադամով, ինչպես գրված է.

«Մեղքը մտավ աշխարհ մեկ մարդու միջոցով, իսկ մեղքով՝ մահը, և այսպիսով, բոլորը մահկանացու դարձան, քանի որ բոլորը մեղանչեցին»: (2)

Մեղքի ամենաահավոր հետևանքը մահն է՝ և ֆիզիկական, և հոգևոր:

– Ֆիզիկական և հոգևոր մա^օհ, – զարմանքով Յամիդին նայեց Ահմեդը, – իսկ ի^օնչ բան է հոգևոր մահը:

– Բարձրյալն ասաց մարդուն, որ եթե նա ուտեր պտուղը՝ անմիջապես «մահով կմեռներ», – պատասխանեց Յամիդը, – և քանի որ Բարձրյալն արդար է և միշտ պահում է Իր Խոսքը, մահը վրա հասավ մարդկությանը: Բայց երբ մարդը մեղանչեց, նա մահացավ նաև հոգևորապես:

– Ինչպե^օս, – հարցրեց Ահմեդը:

– Մեղքի հետևանքը բերեց նրան, որ մարդը վռնդվեց դրախտից, – ասաց Յամիդը, – նա վռնդվեց այն տեղից, որտեղ նա ապրում էր մաքուր, կատարյալ հարաբերությունների մեջ Բարձրյալի հետ, բայց արդեն ստիպված եղավ ապրել դրախտից դուրս: Մարդը հոգևորապես մահացավ, երբ իր մեղքի պատճառով բաժանվեց Կենդանի և Սուրբ Բարձրյալից: Այսպիսով, հենց մեղքն ու չարությունն են բաժանում մարդուն Բարձրյալից: Յենց մեղքի պատճառով է, որ մարդը չունի մտերիմ փոխհարաբերություններ Բարձրյալի հետ:

Քանի որ Բարձրյալը մաքուր է և սուրբ, Նա չի կարող ոչ մի ընդհանուր բան ունենալ մեղքի հետ, և հենց դրա համար էլ մենք կարիք ունենք Փրկչի (Մանաջի), որ կփրկեր մեզ մեղքի բոլոր հետևանքներից¹:

– Ահմե՛դ, դու հավատու՞մ ես, որ քո բոլոր մեղքերը գրված են,– հարցրեց Յամիդը:

Ահմեդը, որը մի փոքր անհանգստացած էր երևում, ասաց.

– Ես գիտեմ, որ երկու հրեշտակներ, որոնք ուղեկցում են յուրաքանչյուր մարդու, գրում են դրանք:

– Բարձրյալը մեր մասին ամեն բան գիտի,– շարունակեց Յամիդը,– մեր ամեն մի լավ կամ վատ արարք, մեր յուրաքանչյուր խոսք կամ միտք, մեր յուրաքանչյուր մտադրություն (նեյիա). այդ բոլորը գրված է Բարձրյալի մոտ: Գիտե՞ս արդյոք, թե ո՞ր կողմի վրա կթեքվի կշեռքի քո նժարը Դատաստանի Օրը (իոմ ալ–հիսաբ):

– Ո՛չ, միայն Բարձրյալը գիտի,– ցածրաձայն ասաց Ահմեդը:

– Բարձրյալը սիրում է քեզ, Ահմե՛դ, հիշի՛ր, Բարձրյալի Ձոհաբերման Գառը՝ Իսան՝ Մարիամի որդին, իր վրա կրեց մեր բոլոր մեղքերը: Ամեն բանի համար թողություն կա,– հանգիստ շարունակեց Յամիդը:

¹ Այսինքն՝ դժոխքից:

Ահմեդը մի րոպե մտածելուց հետո հարցրեց.

– Եթե Մասիհն այդքան կարևոր է, ինչու՞ Ադամն ու Յավան (Եվա) Նրա մասին ոչինչ չեն լսել:

– Իսկ դու կհավատա՞ս, եթե ասեմ, որ նրանք լսել են Մասիհի մասին, – ասաց Յամիդը:

– Ո՛չ, դա բացարձակապես անհնարին է, – գոչեց Ահմեդը:

– Բարձրյալը սիրում է մարդուն և ուզում է հաղորդակցվել նրա հետ, – պատասխանեց Յամիդը, – ահա թե ինչու Նա սկսեց խոսել Մասիհի մասին ամենասկզբից: Դժբախտության ամենաթեժ պահին, որը տեղի ունեցավ Ադամի ու Յավայի հետ, նրանց խոստում տրվեց մի Ազատարարի մասին, որը մի օր կկործանի շայթանի իշխանությունը, որ նա ունի մարդու վրա: Ադամը և Յավան (Եվան) լսում էին, թե ինչպես Բարձրյալն ասաց շայթանին.

«Ես թշնամություն կդնեմ քո և կնոջ միջև, քո սերնդի և կնոջ սերնդի միջև. նա քո գլուխը կջախջախի, իսկ դու նրա գարշապարը կխայթես»: (3)

Ամբողջ մարդկության պատմության ընթացքում որդիները անվանվել են իրենց հոր անունով – Իբրահիմի որդի, Յակուբի որդի և այլն, բայց տվյալ դեպքում խոսքը գնում է «կնոջ սերնդի» մասին: Օրերից մի օր կգար Մեկը, որը հայր չէր ունենա, այլ կլիներ միայն կնոջ որդի: Այդ որդին կջախջախեր մարդու վրա ունեցած շայթանի իշխանություն-

նը, իսկ շայթանը՝ օձի տեսքով, կփորձեր սպանել Նրան՝ խայթելով Նրա «գարշապարը»:

Սա ճշգրիտ նկարագրությունն է այն բանի, ինչ տեղի ունեցավ Իսայի՝ Մարիամի որդու հետ, երբ նա իրեն որպես զոհ մատուցեց մարդկության մեղքերի քավության համար:

– Ապշեցուցի՛չ է, – ասաց Ահմեդը, – արդեն առաջին մարդկանց Բարձրյալը սկսել էր սովորեցնել Մասիհի մասին: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ Մասիհը Սուրբ Գրքի գլխավոր թեման է: Այստեղ մտորելու շա՛տ բան կա:

Իբրահիմի Որդին

– Ինձ շատ հետաքրքիր է՝ ի՞նչ ես դու մտածում Ինժիլի մասին, – հարցրեց Յամիդը, երբ ընկերները հանդիպեցին հաջորդ անգամ:

– Այն իսկապես հրաշալի Գիրք է, – անկեղծ պատասխանեց Ահմեդը, – ես երբևէ նման բան չեմ կարդացել: Այնտեղ այնքա՛ն մանրամասն ու հետաքրքիր ձևով են նկարագրված Մասիհի հրաշքները, իսկ Նրա Լեռան Քարոզն ուղղակի ապշեցուցիչ է: Այնպիսի պարզություն և խորություն կա այդ ուսուցման մեջ: Սովորեցնելով սիրել թշնամիներին և աղոթել հալածողների համար՝ Մասիհը «գլխիվայր» շուռ տվեց ամբողջ հին կարգը:

Նրա ուսուցումը տարբերվում է այն ամենից, ինչ

ես լսել եմ նախկինում: Պետք է խոստովանեմ, որ այս Գիրքը ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց, բայց միևնույն ժամանակ ինձ մոտ առաջացան ճիշտ այնքան նոր հարցեր, ինչքան որ ես պատասխաններ ստացա:

– Հետաքրքիր է,– ժպտալով ասաց Համիդը,– այդ դեպքում սկսենք հենց առաջին հարցից, որը քեզ մոտ առաջացավ:

– Ինչպես կամենաս,– ասաց Ահմեդը,– այսպիսով, ինչու՞ է Ինժիլը սկսվում սերնդաբանությունից – Իբրահիմից Դավուդով մինչև Մասիհը:

Մի պահ մտորելուց հետո Համիդը պատասխանեց.

– Հիշու՞մ ես՝ մենք նախկինում խոսել ենք այն մասին, որ Սուրբ Գիրքը մի ամբողջություն է, և որ կա մի թեմա, որն անցնում է ամբողջ Գրքով մեկ:

– Այո՛, հիշում եմ,– պատասխանեց Ահմեդը:

– Եվ դու հիշու՞մ ես՝ որն էր այդ թեման:

– Մասիհը,– ասաց Ահմեդը:

– Քո հարցի պատասխանը կապված է այդ թեմայի հետ,– ասաց Համիդը,– մարգարեության համաձայն՝ Մասիհը պետք է լիներ Իբրահիմի և Դավուդի սերնդից:

Ահմեդը մի փոքր մտածեց լսածի մասին, իսկ հետո հարցրեց.

– Հենց այդպե՞ս: Իսկ չե՞ս բացատրի մարգարեություններն ավելի մանրամասն:

Համիդը մի փոքր դադար տվեց և սկսեց պատգամել.

– Մի անգամ՝ մոտ 4000 տարի առաջ, Բարձրյալը դիմեց Իբրահիմին, որին հիմա անվանում են Բարձրյալի բարեկամ (հալիլ Ալլահ). Բարձրյալը տվեց Իբրահիմին (նրան դեռ այն ժամանակ անվանում էին Իբրամ) ամբողջ մարդկության համար կարևորություն ունեցող մի խոստում: Թաուրաթում (Մուսիի Հնգամատյանը) մենք կարդում ենք.

«Հավիտենականն ասաց Իբրահիմին. «Թո՛ղ քո երկիրը, քո բարեկամներին և քո հորդ տունը և գնա՛ այն երկիրը, որը ես քեզ ցույց կտամ: Ես քեզանից մի մեծ ազգ կստեղծեմ և կօրհնեմ քեզ, ես կմեծացնեմ քո անունը, և դու օրհնյալ կլինես: Ես կօրհնեմ քեզ օրհնողներին և կանիծեմ քեզ անիծողներին, և քեզանով կօրհնվեն երկրի բոլոր ազգերը»: (1)

Բարձրյալը մի մարդ կանչեց, որն անգավակ էր՝ չնայած երկար տարիներ անուսնացած էր: Նա Իբրահիմին երկիր խոստացավ: Նա նաև խոստացավ նրանից մի մեծ ժողովուրդ ստեղծել և ասաց, որ նրա անունը մեծ և հայտնի կլինի: Այդ բոլոր խոստումները Բարձրյալը ճշգրիտ կերպով կատարեց, բայց ամենազարմանալին վերջին խոստումն էր, այն, որ Բարձրյալ Արարիչն օրհնում է երկրի բոլոր ազգերին Իբրահիմի միջոցով: Այս բոլոր խոսքերի

մեջ անփոփոխած է խոստումը Մասիիի մասին, որը պետք է լիներ Իբրահիմի որդին, և Նրա միջոցով էլ Բարձրյալը պետք է օրհներ ամբողջ աշխարհը:

– Բայց ինչպե՞ս դու կարող ես իմանալ՝ արդյո՞ք դա վերաբերում էր Մասիիին, թե՞ մեկ ուրիշին, – հարցրեց Ահմեդը:

– Դա պարզ է դառնում, երբ կարդում ես Թաուրաթը, – պատասխանեց Յամիդը, – որոշ ժամանակ անց Իբրահիմն ունեցավ երկու որդի՝ մեկը Իսհակ անունով իր կնոջից՝ Սառայից, իսկ մյուսը Իսմայել անունով Սառայի աղախնից՝ Ածարից: Եվ թեկուզ Բարձրյալը մեծապես օրհնեց Իսմայելին, բայց և այնպես, Նա շատ հստակ կերպով ասաց Իբրահիմին մինչև Իսհակի ծնունդը, որ Մասիիի մասին խոստումը պետք է իրականանա Իսհակի միջոցով:

«Բարձրյալն ասաց. «Յենց քո կին Սառան քեզ որդի կծնի, և դու կանվանես նրան Իսհակ. ես նրա հետ Իմ Սուրբ Ուխտը կկնքեմ որպես հավերժական ուխտ նրա սերունդների համար նրանից հետո: Ինչ վերաբերվում է Իսմայելին, ես լսեցի քեզ. ես անպայման կօրհնեմ նրան, ես նրան պտղաբեր կդարձնեմ և խիստ կշատացնեմ նրան: Նա հայր կլինի տասներկու իշխանների, և ես նրանից մեծ ազգ կստեղծեմ: Բայց Իմ Սուրբ Ուխտը կկնքեմ Իսհակի հետ,

**որին Սառան կծնի քեզ համար մյուս տարի
այս ժամանակ»»»: (2)**

– Այո՛, Իսմայելը, որին Բարձրյալն օրհնեց, դարձավ արաքների նախահայրը,– ասաց Յամիդը,– բայց մենք՝ մուսուլմաններս, գիտենք, որ Բարձրյալն Իսհակի սերունդից էլ է շատ մարգարեներ և պատգամաբերներ ուղարկել:

Յամիդը շարունակեց.

– Իսհակը երկու որդի ուներ՝ Եսավը և Յակուբը: Բարձրյալը պարզ կերպով ցույց տվեց, որ խոստացված Մասիհը կլինի Յակուբի սերունդից, որի մասին Նա հայտնեց Յակուբին երազի մեջ.

«Ես Յավիտենականն եմ, քո հայրերի՝ Իբրահիմի և Իսհակի Աստվածը, երկիրը, որի վրա դու պառկած ես, ես կտամ քեզ և քո սերունդներին: Քո սերունդը երկրի փոշու պես բազմաթիվ կլինի, և դու կտարածվես դեպի արևելք և արևմուտք, դեպի հարավ և հյուսիս: Երկրի բոլոր ազգերը կօրնվեն քո և քո սերունդի միջոցով»»: (3)

– Ջարմանալին այն է, որ երբ Բարձրյալը դիմեց Յակուբին, Նա շատ բաներ բառացիորեն կրկնեց Իբրահիմին տված Իր նախնական խոստումը,– ասաց Ահմեդը:

– Բանը նրանում է, որ խոսքը գնում է միևնույն խոստման մասին, որը փոխանցվում էր սերունդից սերունդ,– պատասխանեց Յամիդը,– բայց ինչպես

դու ինքդ էլ տեսնում ես, Ահմեդ, հենց Հակուբի հետնորդներից էր Աստված մտադրվել օրհնել երկրի բոլոր ազգերը:

— Այո՛, և ես սկսում եմ կռահել, թե ինչու է Մասիհը նորից դառնում Սուրբ Գրքի գլխավոր թեման,— ժպտաց Ահմեդը:

— Եհիշտ է,— հաստատեց Համիդը,— այսպիսով, Իսրայելի որդիների մեջ շատ ընտանիքներ կային: Հարցը նրանում էր՝ արդյո՞ք Բարձրյալը հայտնել էր, թե որ ընտանիքից կամ տոհմից պետք է սերեր Մասիհը: Բարձրյալն ընտրեց Դավուդ Թագավորին և խոստում տվեց նրան: Բազմաթիվ մարգարեությունների մեջ Բարձրյալը հայտնում էր, որ Մասիհը պետք է գար Դավուդի տոհմից: Իշայահ Պայգամբարը, որն ապրում էր երկու հարյուր տարի Դավուդից հետո, նմանեցնում էր Հեսսեի տոհմը կտրված ծառի: Հեսսեն Դավուդի հայրն էր: Այդ ընտանիքից, ասում էր Իշայահը.

«Հեսսեի (Դավուդ Թագավորի հոր) արմատից մի Շառավիղ դուրս կգա, Նրա արմատից ճյուղ դուրս կգա: Նրա վրա կհանգչի Հավիտենականի Հոգին... Նա աղքատներին արդարությամբ կդատի, երկրի խեղճերի միջև արդար դատաստան կանի...: Այդ օրը Հեսսեի Արմատն ազգերի համար դրոշ կդառնա, Նրա մոտ կհավաքվեն բոլոր ազգերը, և Նրա հանգստի վայրը փառավոր

ԿԼԻՆԻ»: (4)

– Տեսնենք՝ ես ճիշտ եմ հասկացել,– ասաց Ահմեդը,– ուրեմն՝ Բարձրյալը հայտնել է, որ Մասիհը կլինի Իբրահիմի, Իսհակի, Յակուբի և Դավուդի հետնորդը:

– Շատ ճիշտ է,– հաստատեց Յամիդը լայն ժրպտալով,– երբ մենք կարդում ենք Ինժիլը, տեսնում ենք, որ Մասիհը ծնվեց մարգարեություններին համապատասխան: Ահա թե ինչու է Ինժիլը սկըսվում սերնդաբանությունով, որը ցույց է տալիս, որ Մասիհը Իբրահիմի և Դավուդի հետնորդն է:

– Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ Սուրբ Գրքի հիմնական թեման Իսան է՝ Մարիամի որդին,– անմիջապես նրա միտքն ըմբռնեց Ահմեդը,– բայց դու գիտե՞ս, Յամի՛դ, ինձ մոտ առաջացան բազում նոր հարցեր: Անհամբեր սպասում եմ մեր մյուս հանդիպմանը:

Բարձրյալը Մեկ է

– Ի՞նչ ես տեսնում,– հարցրեց Ահմեդը՝ բարձրացնելով երեք մատները:

– Տեսնում եմ մի ձեռքի երեք մատներ,– ժպտաց Յամիդը, քանի որ արդեն գիտեր, թե ինչ նկատի ունի Ահմեդը:

– Յամի՛դ,– շարունակեց Ահմեդը,– դու կարծում ես Բարձրյալը մե՞կ է, թե՞ երեք:

– Հնարավոր է՝ դու մինչև վերջ չես հասկանում իմ հավատի էությունը, – պատասխանեց Համիդը, – ես հավատում եմ մեկ Արարչի, որը ստեղծել է երկինքն ու երկիրը՝ Ամենակարող, Ամենագետ, Ամենագր:

Դու գիտես, որ իմ հավատը հիմնվում է Սուրբ Գրքի վրա, իսկ այն սովորեցնում է, որ Բարձրյալը մեկ է. այս ճշմարտությունը գրված է Սուրբ Գրքի շատ տեղերում:

– Բայց Բարձրյալը չի կարող միաժամանակ լինել և՛ եռյակ և՛ մեկ, $1+1+1=3$, ոչ թե 1, – իրենն էր պնդում Ահմեդը՝ նորից բարձրացնելով երեք մատները:

– Քանի՞ Ահմեդ ես դու քեզանից ներկայացնում՝ մե՞կ, թե՞ երկու, – հարցրեց Համիդը:

– Իհարկե մեկ, – ասաց Ահմեդը:

– Բայց Բարձրյալը քեզ ստեղծել է և՛ մարմնով, և՛ հոգով, – ասաց Համիդը, – քո մարմինը Ահմեդն է:

– Իհարկե՞, – պատասխանեց Ահմեդը:

– Իսկ քո հոգին նու՞յնպես Ահմեդն է, – հարցրեց Համիդը:

– Դե հա, – անվստահ ասած Ահմեդը՝ հասկանալով, թե խոսքն ուր է տանում Համիդը:

Համիդը շարունակում էր.

– Ինչու՞ այդ դեպքում Բարձրյալը չի կարող լինել եռյակ, եթե Նա մեզ ստեղծել է երկակի:

Չսպասելով, որ Ահմեդը պատասխանի՝ Համի-

դը հարցրեց.

– Ենթադրենք, որ Բարձրյալը բարդ միութիւն է, Մեկը, Ով Իրեն ներկայացնում է երեք անձերով: Ինչքա՞ն կլինի 1x1x1:

– Մեկ,– ցածրաձայն ասաց Ահմեդը,– բայց Իսան՝ Մարիամի որդին, ընդամենը մարդ է և ոչ թե Բարձրյալի Որդին,– Ահմեդը ուշադիր նայեց Յամիդին,– դու ի՞նչ է, հավատում ես, որ Իսան Բարձրյալի Որդի՞ն է:

– Իսկ դու ինչպե՞ս ես մտածում. ինչի՞ն եմ ես հավատում,– հարցրեց Յամիդը:

– Ես լրիվ վստահ չեմ,– պատասխանեց Ահմեդը,– բայց ենթադրում եմ, որ դու հավատում ես, որ իբր Բարձրյալն ունեցել է ֆիզիկական կապ Մարիամի հետ և նրանք որդի են ունեցել:

– Աստագֆեր Ալլահ (Բարձրյալը ողորմի),– գոչեց Յամիդը,– ես բացարձակ այդպես չեմ համարում և չգիտեմ Մասիհի հետևորդներից գոնե մեկին, ով նմանատիպ մի բանի հավատա:

Ահմեդը չէր կարողանում թաքցնել իր զարմանքը.

– Ուրեմն՝ ինչի՞ն ես դու հավատում:

– Ես հավատում եմ, որ Բարձրյալը հավիտենական է, որ Նա գոյութիւն ուներ հավիտենութեան մեջ մինչև արարչագործութիւնը,– պատասխանեց Յամիդը,– բացատրելով, թե ով է Մասիհը՝ Ինժիլը սկսվում է ոչ թե Նրա երկրավոր ծնունդից, այլ հա-

վիտենությունից, Բարձրյալի՝ աշխարհը ստեղծելուց առաջ: Ինժիլուն գրված է.

«Սկզբում էր խոսքը, և խոսքը Բարձրյալի մոտ էր, և խոսքն Աստված էր: Նա սկզբում Բարձրյալի մոտ էր: Այն ամենը, ինչ գոյություն ունի, ստեղծվել է Նրա միջոցով, և գոյություն ունեցողներից ոչ մի բան առանց Նրա չի գոյացել: Նրանում է ամփոփված կյանքը, և այդ կյանքը մարդկության կյանքն է»: (1)

– Բարձրյալը խոսքով ստեղծեց աշխարհը, այդպես չէ՞:

– Այո՛, ճի՛շտ է: Բարձրյալն ասաց՝ թող լինի, և եղավ (կուն ֆա յակուն),– պատասխանեց Ահմեդը:

– Այսպիսով, Բարձրյալը ստեղծեց աշխարհն իր խոսքով,– ասաց Յամիդը,– և այդ խոսքը, որը դուրս եկավ Բարձրյալից, Բարձրյալի մի մասն էր և լցված էր Բարձրյալի շինող, արարող զորությամբ: Ուր էլ որ այդ խոսքը ուղղվեր, ամենուրեք կյանք էր առաջանում իր բազմաթիվ դրսևորումներով:

– Այո՛, ես համաձայն եմ, բայց ո՞րն է «Եվ խոսքը Բարձրյալ էր» արտահայտության իմաստը,– հարցրեց Ահմեդը:

– Ենթադրենք, որ ես՝ որպես վկա, ելույթ եմ ունենում դատարանում: Ինձ իմ խոսքերից բաժանել հնարավոր չէ, քանի որ նրանք ինձ են ներկայացնում և հանդիսանում են իմ էության մի մասը,–

պատասխանեց Չամիդը, — Երբ մենք քեզ հետ գրուցում ենք, մեր խոսքերը հանդիսանում են մեր մի մասը, այնպես որ մենք ներկայացվում ենք մեր խոսքերով: Երբ Բարձրյալը ստեղծեց տիեզերքը, խոսքը, որ Նա արտաբերեց, մեկ ամբողջություն էր իր հետ: Անհնարին է բաժանել Բարձրյալին իր խոսքից: Բարձրյալի այդ հավերժական խոսքը, որը մեկ ամբողջություն է հանդիսանում Նրա հետ և կրում է իր մեջ Նրա բոլոր հատկությունները, հայտնվեց Իսայի՝ Մարիամի որդու մեջ, ինչպես և գրված է.

«Խոսքը մարդ դարձավ և ապրեց մեր մեջ: Մենք տեսանք Նրա փառքը, փառքը, որով օժտված է Երկնային Յոր միածին Որդին՝ լըցված շնորհով և ճշմարտությամբ»:
(2)

Չամիդը շարունակում էր.

— Այն ամենը, ինչ ասաց Բարձրյալն իր մասին, Նրա բոլոր հատկությունները երևացին Մասիհի մեջ:

Բարձրյալը Սուրբ է: Երբ մարդիկ տեսնում էին, թե ինչ սուրբ է Մասիհը, նրանք տեսնում էին Բարձրյալի սրբությունը Նրա մեջ:

Բարձրյալը Սեր է: Տեսնելով Մասիհի սերը՝ մարդիկ տեսնում էին Բարձրյալի սերը Նրանում:

Բարձրյալն Ամենակարող է: Երբ մարդիկ տեսնում էին, թե ինչպես էր Մասիհը քայլում ջրի վրա-

յով, հրամայում էր փոթորիկին և սանձում այն, բժշկում էր կույրերին և հարություն էր տալիս մեռելներին, նրանք տեսնում էին Բարձրյալի իշխանությունը, ուժը և փառքը:

– Բայց ինչպե՞ս կարող էր Ամենագո Բարձրյալը սահմանափակել Իրեն մեկ մարդու մեջ, – չէր հանձնվում Ահմեդը, – մի՞թե Նա թողել էր տիեզերքի կառավարումը, քանի դեռ մարմնավորվել էր Մասիհի մեջ:

– Ահմեդ, – ասաց Չամիդը, – եթե մենք, գտնվելով անծայրածիր օվկիանոսում, մի բաժակ ջուր վերցնենք նրանից, ապա դրա վերլուծման ժամանակ կհայտնաբերենք, որ բաժակի ջուրն ունի նույն հատկությունները, ինչ օվկիանոսինը: Նույն է նաև Մասիհի դեպքում: Հավիտենական, Ամենակարող Բարձրյալը ամենուրեք է: Միևնույն ժամանակ Նա Իրեն բացահայտեց, հայտնվեց Մասիհում միևնույն հատկություններով, միևնույն զորությամբ: Այդ ընթացքում Բարձրյալը, հայտնելով Իրեն Մասիհի մեջ, չսահմանափակեց Իրեն: Նա առաջվա պես Ամենագո է:

– Բայց Բարձրյալը չի կարող հայտնել Իրեն մարդու մեջ, – ասաց Ահմեդը:

– Ինչպե՞ս մենք կարող ենք սահմանափակել Բարձրյալին, – հարցրեց Չամիդը, – ինչպե՞ս կարող ենք մենք ասել, որ Նա, Ով Ամենակարող է կոչվում, ինչ–որ բան «չի կարող»: Չէ՞ որ Նա ամեն բան կա-

րող է: Այդպես չէ՞:

— Այո՛, իհարկե՛, Նա ամեն բան կարող է,— պատասխանեց Ահմեդը,— Բայց ես չեմ կարողանում հավատալ, որ Նա իրեն հայտնեց մարդու մեջ:

— Լավ է, որ մենք միակարծիք ենք այն բանում, որ դա խնդիր է մեզ համար, բայց ոչ թե Բարձրյալի, քանի որ Նա կարող է անել այն ամենը, ինչ կամենա,— ասաց Յամիդը,— իսկ ի՞նչ կասեիր, եթե իմանայիր, որ Բարձրյալը հայտնվել է վառվող թփի մեջ և այնտեղից խոսել է Մուսիի հետ:

Ահմեդը մի փոքր մտածեց և ինքն իրեն ժպտաց. նա հասկացավ, որ Բարձրյալի համար մարդու մեջ հայտնվելը ավելի դժվար չէր, քան թփի մեջ հայտնվելը:

Յամիդը շարունակում էր.

— Մտածիր, Ահմեդ, ո՞վ է իրականում Նա, որ կոչվում է «Բարձրյալի խոսքը» և «Բարձրյալի Յոգին» (Քալլիմատ Ալլահ վա Ռուհ Ալլահ): Սուրբ Յոգին Բարձրյալի հետ մեկ է: Մենք գիտենք, որ Սուրբ Յոգին իջավ Մարիամի վրա, նա հղիացավ և ծնեց Մասիհին, ինչպես նրան ասաց Ջաբրայիլ հրեշտակը.

«Սուրբ Յոգին կիջնի քեզ վրա, և Բարձրյալի գորությունը հովանի կլինի քեզ վրա: Դրա համար այն երեխան, որ կծնվի, կկոչվի «Սուրբ» և «Բարձրյալի Որդի»:

— Յարցը կայանում է նրանում՝ Ո՞վ է Նա, որ այս

կերպով աշխարհ եկավ:

– Ահմեդ, եթե դու բժիշկ լինեիր Միսահի ժամանակներում, Նրա ծննդյան վկայականում ի՞նչ կգրեիր:

– Կարծում եմ, որ կգրեի՝ «Իսա, Մարիամի որդի», – պատասխանեց Ահմեդը:

– Իսկ մո՞ր անունը, – հարցրեց Յամիդը:

– Մարիամ, – պատասխանեց Ահմեդը:

– Իսկ հիմա հոր անունը, – ժպտալով ասաց Յամիդը:

– Բայց չէ՞ որ Նա հայր չուներ, – պատասխանեց Ահմեդը՝ նույնպես ժպտալով:

– Իհարկե, մենք կարող էինք այս մասում պարզապես գիծ դնել, քանի որ նա երկրավոր հայր չուներ, – ասաց Յամիդը, – բայց մենք կարող էինք հարցնել ինքներս մեզ՝ «որտեղի՞ց է Նա»: Որտեղի՞ց է Նրա ծագումը, Ով կոչվում է «Բարձրյալի խոսքը» և «Բարձրյալի Յոգին»: Ո՞վ է Նա իրականում: Նա Ինքն ասում է.

«...Բարձրյալի հացը Նա է, Ով երկնքից է իջնում և կյանք է տալիս աշխարհին...: Ես եմ կյանքի հացը: Ով գալիս է Ինձ մոտ, նա երբեք չի սովածանա, և ով հավատում է ինձ, երբեք չի ծարավի»: (4)

«Ես եմ երկնքից իջած կենդանի հացը: Ով այս հացը ուտի՝ հավիտյան կապրի: Այդ հացն Իմ մարմինն է, որ ես տալիս եմ աշ-

խարհի կյանքի համար»: (5)

– Ահմեդ, Նա եկավ, որպեսզի Իր մարմինը որպես զոհ ներկայացնի մարդկության համար: Նա, ով ուտում է սովորական հացը, կերակրում և պահպանում է իր ֆիզիկական կյանքը: Նա, ով սնվում է երկնքից իջած Բարձրյալի հացով, նա ստանում է հոգևոր կյանք՝ հավիտենական կյանք: Նա, ով հավատում է Մասիհին և Նրա հետ բաժին ունի, կյանք է ստանում, որը հազեցնում է ներքին քաղցն ու ծարավը՝ ծարավը դեպի Բարձրյալը: Ես ինքս փորձառել եմ դա: Մասիհը Բարձրյալի զոհն է քեզ համար, Ահմեդ:

– Ես դեռ դրան պատրաստ չեմ, – ցածրաձայն պատասխանեց Ահմեդը, – գլխումս ամեն տեսակ մտքեր կան: Ես գիտակցում եմ, որ իմ պատկերացումը Բարձրյալի հանդեպ քո հավատի մասին բացարձակ սխալ էր: Ես հիմա վերջապես սկսում եմ հասկանալ, որ դու հավատում ես մեկ Աստծո, և որ Նա Իրեն հայտնեց Մասիհի մեջ: Դու գիտես, որ ես սիրում եմ Մասիհին ամբողջ սրտով, բայց հարցերը, որոնք պատասխան են պահանջում, դեռևս բավականին շատ են: Եկ դրանք մյուս անգամ քննարկենք:

Բարձրյալ և մարդ

– Ես շարունակ մտածում եմ մեր վերջին խո-

սակցության մասին, — ասաց Ահմեդը, — սկզբում դու ասացիր՝ Իսան՝ Մարիամի որդին, մարդ է, իսկ հետո՝ որ Բարձրյալը Նրանում հայտնեց Ինքն Իրեն:

Ո՞վ է Նա իրականում: Միգուցե դուք Մասիհին դարձրել եք Բարձրյալի Որդի այն դեպքում, երբ Նա ավելին չէ, քան Մարիամի որդին:

— Գիտե՞ս, Ահմեդ, — սկսեց Համիդը, — այդ հարցի պատասխանը Բարձրյալի հետ հավիտենական կյանքի բանալին է թե՛ այստեղ, թե՛ հավիտենության մեջ: Եթե մենք մարդուն Բարձրյալ դարձնեինք, մենք այսպես կոչված «շիրկ» (Բարձրյալի հետ ինչ—որ մեկին հավասարեցնելը) գործած կլինեինք, բայց Սուրբ Գիրքն ասում է, որ Բարձրյալը հայտնվեց մարդու մեջ, ոչ թե հակառակը:

Մենք բոլորս համաձայն ենք, որ Մասիհը ծնվեց որպես մարդ: Մարգարեությունների համաձայն Նա Իբրահիմի, Դավուդի ժառանգն էր և Մարիամի որդին: Բայց մարգարեությունների մեջ, որոնք հռչակվում էին Մասիհի ծնունդից շատ առաջ, Բարձրյալն ասում էր այն մասին, որ անձամբ Ինքն է գալու Մասիհի մեջ:

— Դու ուզում ես ասել, որ Իսա Մասիհի պատգամաբերները և Նրանից առաջ մարգարեները սովորեցնում էին այն մասին, որ Բարձրյալն Ինքը կհայտնվի Նրա մեջ, — ցնցված հարցրեց Ահմեդը:

— Սուրբ Գրքի հիմնական թեման Մասիհն է. դրա համար պետք չէ զարմանալ, որ Բարձրյալը Մասի-

հի մասին ճշմարտությունը հայտնել է դեռևս մարգարեներին, — ասաց Չամիղը:

— Յույց տուր ինձ այդ տեղերը Սուրբ Գրքից, — խնդրեց Ահմեդը:

Չամիղը մի րոպե մտածեց և ասաց.

— Երբ Բարձրյալը մեր թվարկությունից 700 տարի առաջ Միքեա մարգարեի միջոցով հայտնեց, որ Մասիիը պետք ծնվեր Բայթ—Լահեն անունով մի քաղաքում, Նա նաև հայտնեց, որ Նա, ով պետք է ծնվի, գոյություն ուներ իր ծնվելուց շատ ավելի վաղ:

«Եվ դու, Եփրատի Բայթ—Լահեն, փոփրես արդյոք Յահուդայի քաղաքների մեջ, քեզանից ինձ համար պիտի դուրս գա Նա, Ով Իսրայելի վրա պիտի իշխի, ու Նրա ծագումը սկզբից է՝ հավիտենության օրերից»: (1)

— Մասիիը, ինչպես գրված է Ինժիլում, իրոք ծնվեց Բայթ—Լահենում,:

«Յուսուֆը նույնպես գալիլեական Նազարեթ քաղաքից գնաց Յահուդա՝ Դավուդի քաղաքը, որ Բայթ—Լահեն էր կոչվում, քանի որ նա Դավուդ թագավորի սերունդից էր: Նա գնաց, որպեսզի Մարիամի հետ միասին, որը նշանված էր նրա հետ և հղի էր, մասնակցի մարդահամարին: Բեթլեհենում Մարիամի ծննդաբերելու ժամանակը հա-

սավ, և նա ծնեց իր անդրանիկ որդին, խանձարուրի մեջ փաթաթեց և մսուրի մեջ դրեց նրան, քանի որ հյուրանոցի մեջ նրանց համար տեղ չգտնվեց»։ (2)

– Հարցը դարձյալ նույնն է՝ Ո՞վ է Նա, որ գոյություն ուներ իր աշխարհ գալուց շատ առաջ։ Նա Ինքը Երուսաղեմում (Ալ-Քօդս) թերահավատ յահուդացիների հետ խոսակցության ժամանակ ասաց.

«Ձեր հայր Իբրահիմը ուրախացավ այն մտքից, որ կարող էր տեսնել Իմ օրը, և նա տեսավ այն և երջանիկ էր։ — Դու դեռ հիսուն տարեկան չկաս,— ասում էին Նրան հրեաները,— և դու Իբրահիմին տեսե՞լ ես։ Իսան ասաց,— ճշմարիտ եմ ասում ձեզ, երբ Իբրահիմը ծնվեց, ես արդեն կայի»։ (3)

– Մենք գիտենք, որ Իբրահիմը ապրել է մոտավորապես մեր թվարկությունից 2000 տարի առաջ։

– Ուրեմն՝ Մասիհն Ինքը պնդում էր, որ գոյություն է ունեցել մինչև իր ծնվելը,— ասաց Ահմեդը,— բայց որտե՞ղ է մարգարեների մոտ գրված, որ Բարձրյալը Իրեն կհայտնի Մասիհի մեջ։

– Դա գրված է Սուրբ Գրքի տարբեր տեղերում,— ասաց Համիդը,— Իշայահ Պայգամբարն ասում էր այն մասին, թե ով դուրս կգա անտեղից, որտեղ Իսան է մեծացել, Մարիամի որդին։ Նա կստեղծի

հավիտենական թագավորություն, որի հիմնական հատկանիշը կլինի Բարձրյալի խաղաղությունը: Նա, լինելով Դավուդ թագավորի ժառանգը, Ինքը հավիտյան կղեկավարի այդ թագավորությունը: Մարգարեն նկարագրում է, թե ով է Մասիհը՝ Նրան տրված բազմաթիվ անունների միջոցով.

«Քանի որ մեզ մի Մանուկ ծնվեց, մեզ մի Որդի տրվեց: Իշխանությունը Նրա ուսերի վրա կլինի, և Նա կկոչվի Սքանչելի Խորհրդակից, Հզոր Աստված, Հավիտենության Հայր, Խաղաղություն Տվող Իշխան: Նրա իշխանության և խաղաղության շատանալուն վերջ չկա: Թագավորում է Նա Իր թագավորության վրա՝ Դավուդի գահի վրա, հաստատելով և պահպանելով այն արդարությամբ և արդարադատությամբ, հիմա և հավիտյանս հավիտենից»: (4)

– Մենք գիտենք, որ անունները, որ Բարձրյալը որևէ մեկին տալիս է, նկարագրում են այդ անձնավորությանը: Ուրեմն՝ Ո՞վ է նա, Ում կոչում են Սքանչելի, Խորհրդրդակից, Իզոր Աստված, հավիտենության Հայր, խաղաղության Իշխան:

– Ինձ թվում է՝ ես սկսում եմ ինձ համար գծել Մասիհի պատկերը, որը նկարագրված է մարգարեների մոտ մինչև Իր ծնվելը, – ասաց Ահմեդը, – բայց արդյո՞ք խոսքը գնում է այն մասին, որ Բարձրյալը

կգա այս աշխարհ, որն Ինքն է ստեղծել:

– Յահիան՝ Ջաքարիայի որդին, Մասիհի ժամանակակիցն էր, — ասաց Չամիդը, — նա ուղարկվել էր Բարձրյալի կողմից, որպեսզի պատրաստեր ժողովրդին Մասիհի գալուստին, որպեսզի ժողովուրդը կարողանար ապաշխարել և հավատալ Նրան: Երբ Յահիային հարցրեցին, թե ո՞վ է նա և ինչու՞ է Բարձրյալը նրան ուղարկել, նա ի պատասխան մեջբերեց Իշայահ Պայգամբարից՝ 40-րդ գլխից, որտեղ գրված է.

«Չնչում է ձայնը. «Անապատի մեջ ուղի պատրաստեք Չավիտենականին, ուղղեք ճանապարհը անմարդաբնակ վայրում մեր Աստծո համար: Ամեն ձորերը թող հարթվեն, ամեն բլուրները՝ ուղղվեն: Եվ կհայտնվի Չավիտենականի փառքը, և բոլոր մարդիկ միասին կտեսնեն այն»: (5)

– Իշայահը նկարագրում է մեծ թագավորի գալուստը, որի համար պետք է պատրաստել նոր, ուղիղ, հարթ ճանապարհ անապատի միջով: Ո՞վ է այս թագավորը, Ահմեդ:

– Մարգարեի համաձայն, դա Չավիտենականն է, որին մենք երկրպագում ենք, — մտածկոտ ասաց Ահմեդը:

– Պատկերը հստականում է, — շարունակում էր Չամիդը, — երբ մենք կարդում ենք Սուրբ Գրքի այս հատվածը.

«Ո՛վ Սիոնի ավետաբեր, ելի՛ր բարձր լե-
ռան վրա: Բարձրաձայն կանչի՛ր, Սիոն: Ո՛վ
երուսաղեմի ավետաբեր, բարձրաձայն
աղաղակի՛ր, մի՛ վախեցիր, ասա՛ Յահուդա-
յի քաղաքներին՝ ահա՛ ձեր Աստվածը: Ահա
Տիրակալը, Հավիտենականը գալիս է ու-
ժով, և Նրա գորությունը իշխում է: Ահա,
Նրա վարձը իր հետ է, և Նրա վարձատրու-
թյունն իր առջևում է: Նա արածեցնում է իր
հոտը հովվի նման, գրկում է գառնուկնե-
րին, կրում է նրանց իր կրծքի վրա և խնամ-
քով քշում է մաքիներին»»: (6)

– Մասիհը, իրոք, եկավ որպես Հովիվ՝ բոլոր հա-
վատացյալների համար: Նա ինքն ասաց իր մա-
սին.

«Ես եմ բարի հովիվը: Բարի հովիվն իր
կյանքն է տալիս իր ոչխարների համար»:
(7)

– Բայց, Ահմե՛դ, Ո՛վ է իրականում Նա, որ կգա որ-
պես հովիվ:

– Ես ստիպված եմ ընդունել, որ նա խոսում է
Բարձրյալ Արարչի մասին, – պատասխանեց Ահմե-
դը, որին խորապես հուզել էին մարգարեի խոսքե-
րը:

Համիդը շարունակեց.

– Ինչպես դու հիմա հասկանում ես, Ահմե՛դ, այս

բոլոր մարգարեությունները կատարվեցին Իսայի՝ Մարիամի որդու մեջ:

– Մինչ Մասիիը կծնվեր, Ջաբրայիլ հրեշտակը եկավ Ջաքարիայի մոտ, որը պետք է դառնար մարգարեի հայրը, և պատմեց նրան իր ապագա որդու հատուկ կոչումի մասին.

«Դեռ իր ծնունդից նա կլցվի Սուրբ Հոգով: Շատ իսրայելացիների նա կդարձնի դեպի Իրենց Աստծուն՝ Հավիտենականին: Նա կնախորդի Նրան Իլիասի հոգով, որպեսզի դարձնի հայրերի սրտերը երեխաներին, իսկ անհնազանդներին՝ արդարների իմաստությանը, որպեսզի Հավիտենականի գալուստի համար ժողովուրդ պատրաստի»: (8)

– Ահմեդ, համաձայն Ինժիլի, ու՞մ էր նախորդում Յահիա Պայգամբարը:

– Նա նախորդում էր Հավիտենականին՝ իրենց Աստծուն,– պատասխանեց Ահմեդը:

– Երբ Յահիա Մարգարեն ծնվեց,– շարունակեց Համիդը,– Ջաքարիան մարգարեացավ իր որդու մասին.

«Եվ դու, ո՛վ մանուկ, Բարձրյալի մարգարեն պիտի կոչվես, քանի որ Հավիտենականի առջևից պիտի քայլես՝ իր ժողորդին իմացնելով իրենց փրկությունը՝ մեղքերի

թողությամբ, մեր Աստծո գթառատությամբ, որով Նա կուղարկի ծագող Արեգակին երկնքից»: (9)

– Հիմա դու հասկանու՞մ ես, Ահմե՛դ, որ համաձայն Իշայիահ Պայգամբարի, Ջաբրայիլ հրեշտակի և Ջաքարիայի՝ Յահիա Պայգամբարը պետք է գար Հավիտենականի առջևից, իսկ Նա, Ով հետևում էր նրան, հենց Ինքը Բարձրյալն է:

– Այո՛, ես հասկանում եմ դա և ենթադրում եմ, որ այդ ամենը իրոք հաստատվեց, երբ եկավ Մասիհը,– լուրջ ասաց Ահմեդը:

– Այո՛, և այն էլ՝ ամենայն մանրամասնություններով,– ասաց Համիդը,– երբ Մարիամը ծնեց Մասիհին Բայթ–Լահենում՝ Դավուդի քաղաքում, Բարձրյալի հրեշտակը հայտնվեց մի քանի հովիվների, որոնք դաշտում էին, և ասաց.

«Մի՛ վախեցեք: Ես եկել եմ ձեզ մի լուր հայտնելու, որ ուրախություն կբերի ամբողջ ժողովրդին: Այսօր Դավուդի քաղաքում ծնվեց ձեր Փրկիչը՝ Մասիհը, Տիրակալը»: (10)

Այն, որ Մասիհն Ինքը Բարձրյալն է, նորից ու նորից հաստատվում է Ինժիլուն: Նա Ինքը ասաց.

«Ես և Հայրը մեկ ենք»: (11)

– Ես ամենասկզբից էլ սիրում և պատվում էի Իսային՝ Մարիամի որդուն,– ասաց Ահմեդը,– բայց միայն հիմա եմ հասկանում, թե ով է իրականում

Մասիհը, և ինչու է Նա ծնվել, եկել աշխարհ: Ես անկեղծ շնորհակալ եմ քեզանից, Համիդ, որ դու չափսոսացիր քո ժամանակը, որպեսզի այդ ամենն ինձ բացատրես:

– Ահմե՛դ,– լուրջ ասաց Համիդը,– Մասիհին հավատալով՝ Բարձրյալն առաջարկում է քեզ բոլոր մեղքերի թողություն և հավիտենական կյանք:

Մասիհը, հաղթած լինելով մահվանը և հարություն առած լինելով մեռելներից, ասաց.

«Ես եմ հարությունն ու կյանքը: Նա, ով ինձ հավատում է, թեև մեռնի, կկենդանանա, իսկ ով ապրում և հավատում է Ինձ, հավիտյան չի մեռնի»: (12)

Դու դրան հավատու՞մ ես:

– Ահմե՛դ, ուզու՞մ ես ընդունել այն պարզևր, որն առաջարկում է քեզ Բարձրյալը Մասիհին հավատալով:

– Այո՛, ինձ թվում է, որ Նա հենց հիմա թակում է իմ դուռը,– արցունքն աչքերին ասաց Ահմեդը,– ինչպե՞ս ես կարող եմ ընդունել Բարձրյալի պարզևր:

– Դա դժվար չէ,– ասաց Համիդը,– աղոթիր Բարձրյալին քո բառերով: Խոստովանիր Նրան ամենը. միևնույնն է, Բարձրյալն ամեն բան գիտի: Ընդունիր մեղքերի թողություն այն զոհի միջոցով, որ Մասիհը քո փոխարեն կատարեց: Աղոթիր, որ Բարձրյալը գա քո կյանքի մեջ Սուրբ Հոգով և

պարզևի քեզ անհրաժեշտ զորութիւն, որպեսզի դառնաս Մասիիի հետևորդը, Նրա աշակերտը: Աղոթի՛ր Իսա Մասիիի անունով: Նա Իր զոհի շնորհիվ միջնորդ է դարձել քո և Երկնային Հոր միջև:

Երբ դու այս կերպով ընդունես Մասիիին որպես Բարձրյալի պարզը, քո կյանքում հրաշք կկատարվի: Ինժիլը սովորեցնում է, որ դու վերըստին կժնվես: Դու նոր կյանք կստանաս Բարձրյալից և նոր, անձնական փոխհարաբերություններ Բարձրյալի հետ Մասիիի միջոցով: Բարձրյալը կդառնա քո Հայրը, իսկ դու՝ Նրա որդին, ինչպես դա գրված է Ինժիլում նրանց մասին, ովքեր ընդունեցին Մասիիին.

«Բայց ովքեր հավատացին և ընդունեցին Նրան, Նա իշխանություն տվեց նրանց դառնալու Բարձրյալի երեխաները»: (13)

Երբ նրանք վերջացրին աղոթքը և միասին շնորհակալություն հայտնեցին Բարձրյալին, Համիդը, լայն ժպտալով, ասաց.

– Բարի գալուստ ընտանիք: Հիմա մենք Մասիիի միջոցով Բարձրյալի մեծ ընտանիքում եղբայրներ ենք:

– Չգիտեմ, թե ինչպես քեզ շնորհակալություն հայտնեմ, – ասաց Ահմեդը երջանկությունից փայլելով:

– Շնորհակալություն հայտնիր Բարձրյալին, և հիշիր՝ դա պետք է անել ամեն օր, – ասաց Համի-

դը,– փնտրիր հաղորդակցվել նրանց հետ, ովքեր հետևում են Իսա Մասիի ուսմունքին: Հիմա դու իրոք կարող ես աղոթել այն աղոթքով, որ սովորեցրեց Մասիին Իր աշակերտներին.

«Հա՛յր մեր, որ երկներուն ես, թող Քո անունը փառավորվի: Թող Քո թագավորութունը հաստատվի, և Քո կամքը կատարվի երկրի վրա, ինչպես երկներուն է: Մեր ամենօրյա հացը այսօր մեզ տուր: Ներիր մեզ մեր մեղքերը, ինչպես մենք էլ ներեցինք մեզ չարութիւն անողներին: Մի՛ թող մեզ ենթարկվենք փորձութեան, ապա չարից մեզ ազատիր»: (14)



Մեջբերումներ Սուրբ Գրքից

Հոհարկութեան Դասը

- (1) Հռովմայցիս 6:23
- (2) Իոհանն (Հովհ.) 1:29
- (3) Հայտնութայուն 3:20

Բարչրցալի Հոհը

- (1) 1 Տիմոթեոս 2:5-6
- (2) Եբրայեցիս 9:22
- (3) Իշայիսահ (Եսայի) 53:4-7
- (4) Հաբաուր (Սաղմոս.) 21:15-19
- (5) Մարկոս 10:45

Մեղքը

- (1) Սկիզբ (Օմնոգոց) 2:16-17
- (2) Հռովմայցիս 5:12
- (3) Սկիզբ (Օմնոգոց) 3:15

Իբրահիմի ողբին

- (1) Սկիզբ (Օմնոգոց) 12:1-3
- (2) Սկիզբ (Օմնոգոց) 17:19-21
- (3) Սկիզբ (Օմնոգոց) 28:13-14
- (4) Իշայիսահ (Եսայի) 11:1,2,4,10

Բարչրցալը մեկ է

- (1) Իոհանն (Հովհ.) 1:1-4
- (2) Իոհանն (Հովհ.) 1:14
- (3) Դուկաս 1:35
- (4) Իոհանն (Հովհ.) 6:33,35
- (5) Իոհանն (Հովհ.) 6:51

Բարչրցալ և մեղքը

- (1) Միքիս 5:2
- (2) Դուկաս 2:4-7
- (3) Իոհանն (Հովհ.) 8:56-58
- (4) Իշայիսահ (Եսայի) 9:6-7
- (5) Իշայիսահ (Եսայի) 40:3-5
- (6) Իշայիսահ (Եսայի) 40:9-11
- (7) Իշայիսահ (Եսայի) 10:11
- (8) Դուկաս 1:15-17
- (9) Դուկաս 1:76-78
- (10) Դուկաս 2:10-11
- (11) Իոհանն (Հովհ.) 10:30
- (12) Իոհանն (Հովհ.) 11:25,26
- (13) Իոհանն (Հովհ.) 1:12
- (14) Մատթեոս 6:9-13

Թարգմանեց

Էդուարդ Չարությունյանը

Սրբագրեցին՝

Աննա Չովհաննիսյանը

Արմեն Նիսիյանը

Լ. Մ. Աբդալլա

Ճշմարտության որոնումները